ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի մայիսի 8-ի ՀՕ-297 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի 7-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ չորրորդ պարբերությամբ.

«Պարտադիր տասներկուամյա միջնակարգ կրթության իրավունքի իրացման համար սույն հոդվածի 7-րդ մասի առաջին պարբերությունում նշված տարիքային սահմանափակումը չի գործում քրեակատարողական հիմնարկներում՝ վեց ամիս և ավելի ժամկետով ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալների և/կամ կալանավորված անձանց համար, և այդ անձինք, իրենց ցանկության դեպքում, առանց տարիքային սահմանափակումների, կարող են իրացնել իրենց կրթության իրավունքը (միջնակարգ կրթություն ստանալ)՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին։»։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետը և 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**ա. այլընտրանքային կրթական ծրագիր՝** առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների, ուսուցման կազմակերպման ձևերի, միջոցների և մեթոդների բազմազանություն առաջարկող կրթական ծրագիր կամ կրթական ծրագիր, որն իրականացվում է քրեակատարողական հիմնարկներում գտնվող ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց համար՝ հաշվի առնելով այդ անձանց կրթական, մշակութային, սոցիալական, առողջական և այլ բնույթի առանձնահատկությունները, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների՝ տեղակայման, շենքային, տեխնիկական հագեցվածության, անվտանգության ապահովման և այլ բնույթի պայմանները, որն ապահովում է հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքները,».

«**10) հատուկ հանրակրթական դպրոց՝** կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ինչպես նաև հակասոցիալական վարք դրսևորող սովորողների համար հանրակրթական հիմնական ընդհանուր և (կամ) հանրակրթական հիմնական հատուկ ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության տեսակ կամ քրեակատարողական հիմնարկներում գտնվող ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց համար հանրակրթական հիմնական ընդհանուր և (կամ) հանրակրթական հիմնական առանձնահատուկ ծրագրեր իրականացնող՝ արդարադատության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության ենթակայությամբ գործող ուսումնական պետական հաստատության տեսակ։»:

Հոդված 2. Օրենքի 30-րդ հոդվածի՝

1. 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 26.16-26.18-րդ կետերով՝

«26.16) արդարադատության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության հետ համատեղ սահմանում է քրեակատարողական հիմնարկներում գտնվող ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց համար կրթական ծրագրերի՝ մշակման, ընդունման (հաստատման), ֆինանսավորման և իրականացման կարգը.».

«26.17) արդարադատության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության հետ համատեղ սահմանում է քրեակատարողական հիմնարկներում գտնվող ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց համար նախատեսված հատուկ հանրակրթական դպրոցի գործունեության կարգը.».

«26.18) արդարադատության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող

նախարարության հետ համատեղ մշակում է քրեակատարողական հիմնարկներում գտնվող ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց համար նախատեսված այլընտրանքային կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման չափորոշիչները.»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը: